

ՀՏԴ 635.153

Բուսաբուծություն

**ԿԵՐՔԵԼՈՒԿ ՄՈՄԱՏԵՐԵՎՈՒ /*Anthriscus cerefolium* (L) Hoffm/  
ԲՆՈՒԹԱԳԻՌԸ, ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՆ ԵՎ  
ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐՆԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Մայա ԾԱՏՐՅԱՆ**

**Քանդի բռներ -** նեխտուրազգիներ, դեղաբույս, համեմունք, արեալ, զանք, ծլունակություն, վնասացիոն շրջան:

**Ключевые слова –** зонтичные, лекарственные растения, приправа, ареал, посев, всхожесть, вегетационный период.

**Key words:** Apiaceae, medicinal plant, seasoning, areal, crops, viability, vegetative period.

**M. Ցատուրյան**

**Характеристика, распространенность, сельскохозяйственная  
техника Купыря Бутенелистного и возможности его введения в производство**

Данная статья посвящена размножению, росту и особенностям развития, выращиванию и распространению однолетнего растения Купыря бутенелистного, имеющего питательное, пряное и лечебное значение. Была разработана система его сельскохозяйственного производства, получен урожай, он был подвергнут химическому анализу, также была определена его экономическая эффективность. В результате исследований была составлена технологическая карта Купыря бутенелистного. В этом отношении, данная статья имеет большое научное и практическое значение.

**M. Tsatryan**

**The Characteristics, Prevalence, Agricultural Machinery of the *Anthriscus Cerefolium*  
and Opportunities of its Investing in Production**

This article focuses on the breeding, growth and development features, cultivation and prevalence of the yearling herb (*Anthriscus cerefolium*) which has nutritional, spicy and curative importance. The system of its agricultural production has been elaborated, as well as the harvest received, it has been subjected to chemical analysis and its economic efficiency has been defined. As a result of researches, the technological card of the *Anthraces cerefolium* has been drawn up. In this regard, the article has great scientific and practical significance.

Սույն հոդվածում ուշադրություն է դարձվում սննդային, համեմունքային և բուժական նշանակություն ունեցող միամյա խոտաբույսի՝ կերպելով մոմատերիկ բազմացման, աճի ու զարգացման առանձնահատկություններին, մշակությանը և տարածվածությանը: Մշակվել է դրա ազրտեխնիկական միջոցառումների համակարգը, ստացված բնադրք ենթարկելի քիմիական վերլուծության և որոշել տնտեսական արդյունավետությունը: Արդյունքում կազմվել է կերպելով մշակության տեխնոլոգիական բարտը: Այս առումով հոդվածը ունի գիտական և գործնական մեծ նշանակություն:

Կերպելով մոմատերիկ /*Anthriscus cerefolium* (L) Hoffm/ պատկանում է նեխտուրազգիների /Apiaceae/ ընտանիքին, *Anthriscus* ցեղին:

Նույր և սնամեջ ցողունով միամյա խոտաբույս է: Հասուն վիճակում բույսի բարձրությունը հասնում է 60-70սմ, արտաքին տեսքով թերթնակի նման է մաղարանսին, սակայն տերթները ավելի բարակ են և խիտ: Ցողունը կամ երեսը կամ թերթները միացած են առանձին կամ մասնակի միացած վեցական թերթներում: Ցողունը ունի խիտ վարդակ՝ բաղկացած մինչև 25-40 բաց կանաչավուն գեղեցիկ տերթներից, որոնք բազմափետուր են երկար կողունների վրա, բարդ են նույրակի, բառակի/ և կմնատ փետրածի: Ծաղիկները մասնը են, սպիտակ կամ բաց վարդագույն, հավաքված բարդ հովանոցում, որոնք իրենց հերթին կազմված են պարզ հովանոցիկներից: Ծաղկում է ապրիլ-օգոստոս ամիսներին: Նրա պտուղը 7-10մմ երկարությամբ, զծանրկարավուն, հարթ և մերկ, երկսերմանի է, որն օգոստոս-հոկտեմբերին հասունանալիս ստանում է սև-մանուշակագույն երանգ: Մերմերը տեսքով նման են եղնաու փշերի /Петров В.А.1940/:

Ցույքը ստվերադիմացկուն է, ոչ պահանջկուտ, զերադասում է լավ փուլս, անմշակ կամ բիչ օգտագործված հողերը, հանդիպում է գողակիր կամ թլրապատ վայրերում, արևկող խոտառաս բարձրություններում, ցանկապատերի արանքում, ճանապարհների եղբերին, խոնավ բանջարանոցներում, բաց անտառներում, թփուտներում, դաշտավայրերում, լեռնոտ վայրերում, արևոտ լանջերին: Նա նախընտրում է թերթ, չնզոր ու ալկալային հողերը: Կերպելով ունի լայն տարածում ժողովրդական բժշկության մեջ: Ցույքն ախտրժաբեր է, օժտված է անխոսնի բաղդր բուրմունքով, որի համար օգտագործվում է որպես համեմունք, տրամադրությունը բարձրացնող է,

Նյարդերը հանգստացնող և ունի քնարենք հատկություն: Ղարաբաղում կերպելուկը որպես համեմունք օգտագործում են թարմ ու չորացրած վիճակում, առանձին ճաշերի մեջ /Աբրահամյան Ե., Աբրահամյան Ն., 2011/:

*Տարածվածությունը:* Կերպելուկը տարածված է Լեռնային Ղարաբաղի հանրապետության բոլոր լանդշաֆտային գոտիներում՝ ընդգրելով ԼՂՀ բոլոր շրջանները՝ Մարտակերտ, Ասկերան, Մարտունի, Հադրութ, Շուշի, Քաշաթաղ, Քարվաճար: Մասնավորապես հանդիպում է 500-1600մ բարձրություններում՝ հետանտառային և անտառային գոտիների ստորին զանգվածներում:

Բանի որ խոնավամեր բույս է, շատ տարածված է Թարթառի, Խոչենի, Կարկառի, Վարանդայի, Իշխանագետի և նրա վորակների հովիտներում, հատկապես հյուսիսահայաց լանջերում:

Այն աճում է Ռուսաստանում Ռուստովի և Կրասնոդարի մարզերում, գրեթե ամբողջ Եվրոպայում /բացառությամբ Իսպանիայի, Անգլիայի, Խոտալիայի/, հանդիպում է Կոնտրոնական Ասիայում, Կովկասում, Թուրքիայում, Իրանում /Ալեքսեյ Դ. 1967/:

Կերպելուկի սերմանյութը մեր կողմից հավաքվել է Ասկերանի շրջանի Խնապատ գյուղի շրջակայից /ծ.մ. 580-730մ բարձրություն/, որտեղ այն երեսն հանդիպում է նաև որպես մշակաբույս:

Խնապատն որոշվել է կերպելուկի սերմերի ծլունակությունը: Սերմերը շատ արագ են ծլարձակում, որոնց զանգվածային ծլումը արձանագրվել է ցանքից հետո 7-րդ օրը, 11-րդ օրը դրսնորում է առավելագույն ծլունակություն /70%/:

Արտադրական պայմաններում փորձարկվել է աշնանը և զարնանը կատարված ցանքերում բույսերի ֆենոլգիհական փուլերի անցման դինամիկան, նրա վեգետացիայի և գեներացիայի ընթացքը, կատարվել են կենսաչափումներ:

#### Աղյուսակ 1.

##### Կերպելուկ մոմատոերևի *Anthriscuscerefolium* (L) Hoffm ֆենոփուլերի անցումը (միջինացված տվյալներ)

Ֆենոփուլը	գարնանացան	աշնան ցանք	բնական ցանք
Ցանք	5.03	20.10	-
Ծլում	15.03	1.03	-
1-ին իսկական տերևի առաջացում	18.03	6.03	-
4 տերևից	22.03	10.03	9.03
6 տերևից	25.03	13.03	13.03
9 տերևից	29.03	17.03	18.03
12 տերևից	3.04	20.03	21.03
16 տերևից	7.04	24.03	25.03
18 տերևից	12.04	28.03	28.03
20 տերևից	15.04	31.03	31.03
24 տերևից	21.04	3.04	2.04

Ֆենոփուլերի անցումը դիտարկելիս նկատելի է, որ աշնանը ցանված սերմերը ավելի վաղ են ծլարձակում /1.03/, քան զարնանը ցանվածները /15.03/: Տարբերությունը 14 օր է կազմում: Այնուհետև տվյալ տարանջատումով անցումները գրեթե պահպանվում են: Առաջին իսկական տերևները ծևավորվում են զարնան ցանքերում մարտի երկրորդ տասնօրյակում /18.03/, աշնան ցանքերում մարտի սկզբներին /6.03/: Վարդակը կազմավորվում է 3-4 տերևի ծևավորում /10-21.03/, որտեղ դրանց քանակը կարող է հասնել մինչև 20-24 հատի /3-15.04/: Վերը նշված փուլից վարդակները օգտագործում են սննդի մեջ, մինչև ուշ աշուն:

#### Աղյուսակ 2.

##### Կերպելուկ մոմատոերևի /*Anthriscuscerefolium* (L) Hoffm/ կենսաչափական որոշ միջինացված տվյալներ

Ֆենոփուլը	Ցանքի ժամկետը Ցուցանիշը	գարնան ցանք	աշնան ցանք	բնական ցանք
Վարդակը կազմված՝				

4 տերևից	տերևային մակ.,սմ <sup>2</sup>	18.6	21.2	31.6
	արմատ երկ., սմ	9	12	11
	տերևի երկար., սմ	5	6	6
6 տերևից	տերևային մակ.,սմ <sup>2</sup>	41.8	42.1	47.5
	արմատ երկ., սմ	11	10	11
	տերևի երկար., սմ	7.5	8	8
9 տերևից	տերևային մակ.,սմ <sup>2</sup>	81.3	89.5	101
	արմատ երկ., սմ	14	12	12
	տերևի երկար., սմ	10	12	15
	վարդակի կշիռ, գ	3	3.1	3.5
12 տերևից	տերևային մակ.,սմ <sup>2</sup>	223	230	336
	արմատ երկ., սմ	20	18	21
	տերևի երկար., սմ	13	13.5	18
	վարդակի կշիռ, գ	6	6	6.1
16 տերևից	տերևային մակ.,սմ <sup>2</sup>	532	543	656
	արմատ երկ., սմ	23	22	25
	տերևի երկար., սմ	15	16	20
	վարդակի կշիռ, գ	9.5	9.7	10
18 տերևից	տերևային մակ.,սմ <sup>2</sup>	724	728	802
	արմատ երկ., սմ	26	18	30
	տերևի երկար., սմ	20	21	25
20 տերևից	տերևային մակ.,սմ <sup>2</sup>	795	812	944
	արմատ երկ., սմ	28	30	28
	տերևի երկար., սմ	24	26	32
24 տերևից	տերևային մակ.,սմ <sup>2</sup>	1194	1226	1360
	արմատ երկ., սմ	30	32	33
Ծաղկացողունների առաջացում	տերևային մակ.,սմ <sup>2</sup>	1476	1560	1735
	ծաղկ բարձր/տրամ	55/0.4	64/0.6	70/0.5
	տերևի երկար., սմ	45	51	60
Ծաղկման շրջան	կենտ.ծաղկ բարձր/տրամ, սմ/սմ	65/0.5	72/0.5	85/0.6
	կենտ.ծաղկ.ծաղկաբույլների /հովանոց/ թիվը	18-25	25-31	30
	երկրորդային հովանոց. թիվը	50--65	40-70	40-60
	ծաղիկ. թիվը 1 ծաղկաբույլ./հովանոց/	30-50	30-55	30-55
	հովանոց.թիվը 1 բույսի վրա /միջինը/	50-80	55-90	50-90
	հովանոցում հովանոցիների թիվը	3-5	3-5	3-5
	ծաղիկների թիվը մեկ բույսի վրա, հատ	6-10	7-11	5-11
	ծաղիկների թիվը մեկ բույսի վրա, հատ	1900	2360	2200
	զլսավոր հովանոցի տրամագիծ, սմ	6	6-7	6
	երկրորդային հովանոցի	4-5	4-5	4-5

	տրամագիծ, սմ			
Սերմների հասունացում	սերմներիթիվը 1ծաղկից	2	2	2

Գարնան ցանքներում բույսերը 3-4 տերևներից բաղկացած վարդակներ են կազմակերպում մարտի երկրորդ կեսին /20-21.03/, իսկ աշնան ցանքներում մարտի սկզբներին /8-10.03/ և ունենում են 18.6-21.2սմ<sup>2</sup> տերևային մակերես, սալիքն գրափակությունները ցույց տվեցին, որ վայրաւած ձևերը ավելի խոշոր տերևային մակերես են ձևավորում՝ 31.6սմ<sup>2</sup>: Եթե տերևային վարդակների ձևավորման սկզբնական փուլներում արհեստական և բնական ցանքի բույսերի մեջ հետաքրքրող չափանիշները ամենա են տարբերվում, ապա հետագա փուլներում տարբերությունը զգալի է:

Վարդակի ձևավորումը տևում է 35-40օր /մարտ-ապրիլ/: Հենց այս ժամանակաշրջանում են վարդակի տերևները օգտագործում սննդի մեջ:

Ծաղկացողունների առաջացման փուլը տարածակենու է ընթանում կախված ցանքի ժամկետից /տարբերությունը /10-15 օր/: Այս փուլում ծաղկացողունները չեն օգտագործվում սննդի մեջ, կարելի է ընտրել միայն ծաղկացողունների նուրբ տերևները:

Աղյուսակ 3.

### Կերպելով գններատիվ օրգանների առաջացման ընթացքը,

Ժամկետը Ֆենոփուլը	գարնանացան	աշնանացան	բնական ցանք
Ծաղկացողունների առաջացում	19.04-3.05	5.04-20.04	4.04-17.04
Գլխավոր հովանոց. առաջաց.	9-10.05	26-28.04	29.04
Երկրորդային հովանոց. առաջաց.	13-15.05	1-3.05	3-7.05
Գլխավոր հովանոցի ծաղկում	13.05	2.05	30.04
Երկրորդ. հովանոցի ծաղկում	20-21.05- 30.05	8.12.05-19.05	10.05-22.05
Սերմների հասունացում	26.05-16.07	15.05-24.06	13.05-30.06

Կերպելով ծաղկները հավաքված են հովանոց ծաղկաբույլերում, որոնցթիվը տատանվում է 50-90 հատ: Հովանոցում հաշվում են 3-5 հովանոցիկներ: Ծաղկների թիվը հովանոցիկներում տատանվում է 5-11 հատ, իսկ հովանոցում՝ 30-55 հատ:

Ակզրում գլխավոր հովանոցներ են ձևավորում աշնանացան և բնական ցանքի բույսերը /26-29.04/, իսկ գարնանացան բույսեր՝ մայիսի առաջին տասնօրյակում: Համապատասխանաբար, աշնանացան և վայրաւած բույսերի ծաղկների բազվելու և սերմների հասունացման ժամկետները գարնանացան բույսերի համեմատությամբ առաջ են անցնում 10-20 օրով:

Դիտարկվող երեք տարբերակներում էլ յուրաքանչյուր հաջորդ հովանոցի ծաղկների բազման սկզբի ժամանակը համապատասխանում է նախորդի ծաղկման ավարտին: Ընդ որում, սկզբում ծաղկում է գլխավոր հովանոցը, որի ծաղկումը ավելի կարճ է տևում, քան առաջին կարգի հովանոցների ծաղկման փուլը:

Յուրաքանչյուր նույն հովանոցի ներսում անգամ, ծաղկների ծաղկման տևողությունը տարբեր է: Դա է պատճառը, որ նույն հովանոցը կրում է և՝ ծաղկներ, և՝ հասունացած սերմներ:

Ծաղկման փուլը տևում է ապրիլից մայիս, գարնան ցանքներում՝ մայիսի 13-ից մինչև վերջները, աշնան ցանքներում՝ մայիսի սկզբներից /02.05/ մինչև մայիսի 20-ը:

Սերմի հասունացումը գլխավոր հովանոցում տեղի է ունենում ծաղկումից 13-15 օր անց, իսկ առաջին կարգի հովանոցներինը մոտ 20 օր անց, ավարտվելով վեգետացիոն շրջանը գարնան ցանքներում 16.07-ին, աշնան ցանքներում՝ 24.06-ին, վայրի ձևերինը՝ 30.06-ին: Վաղ աշնանացան /սեպտեմբեր-հոկտեմբեր/ կերպելուկը լավ ձևառում է դաշտում և վաղ գարնանից արդեն պիտանի է օգտագործման համար:

Կերպելով լինելով արցախան ժենօյալով հացի ամենակարևոր և գործածական կանաչներներից ի շնորհիվ իր յուրահատուկ հոտի, ունի նաև այլ կիրառություններ: Արցախում

Կերքելուկը արդեն սկսել են օգտագործել ճաշատեսակների մեջ՝ որպես համեմունք: Հաճախ դրանք ուղղակի ուժում են հացի հետ: Այս տեսակներից այն մշակության մեջ ներդնելու խնդիրը վաղուց եք հասունացնել:

Ըստ մեր դիտարկումների և փորձերի կերքելուկը կարելի է ցանել և՝ աշնանը, և՝ գարնանը, և՝ ամռանը: Աշնանացան կերքելուկը լավ է ձմեռում դաշտում և վաղ գարնանից արդեն պիտանի է օգտագործման համար: Կերքելուկը կարելի է ցանել մարզերով շաղացան: Ցանքից 10-12 օր հետո սերմերը ծլում են: Ծլելուց հետո խնամում են սովորական ձևով՝ քաղանելով, վիսքնելով և ջրելով: Հնտագայում կարելի է 4-5 անգամ բնրքահավաք կատարել՝ հնձելով բույսի տերևները, որի դեպքում 1մ<sup>2</sup>-ից ստացվում է միջինը 10-13 փունչ /յուրաքանչյուրը 100գ քաշով/:

Մնադի մեջ օգտագործում են վարդակի նուրբ տերևները: Կարելի է ինչպես հնձել, այնպես էլ արմատներով հանել և վերջիններիս հեռացումից հետո օգտագործել սննդի մեջ: Հիմնականում շուկաներում վաճառում են ուղղակի փնջերով:

Սռաջին անգամ /հատկապես շաղացանի դեպքում/ պետք է նոսրացնել ծլելուց 20-25օր անց, միջբուսային տարածությունը թողնելով 5-7սմ : Իսկ երկրորդ անգամ ըստ անհրաժեշտության, եթե դեռևս զգացվում է բույսերի խտության ազդեցությունը նրանց աճի վրա:

Վեգետացիայի ընթացքում անհրաժեշտ է հետևել, որ դաշտը ունենա չափավոր խոնավություն, որի պակասը վատ է ազդում բույսի աճի վրա:

Մերս ստանալու նպատակով ծաղկացողունները պետք է թողնել, որ իրենց վրա ձևավորեն ծաղիկներ և սերմեր:

Կերքելուկի սերմերը հավաքում են՝ ըստ առանձին ճյուղավորումների հասունացման, եթե հովանոցները ստանում են գորշավուն գույն: Հասունացած հովանոցները կտրում են, խրձերով /կապոցներով/ կապում, չորացնում և հետո կալսում ու քամիարում:

#### Աղյուսակ 4.

#### ՏԵԽՆՈՂԻԱԿԱՆ ՔԱՐՏ ԿԵՐՔԵԼՈՒ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ

Աշխատանքի անվանումը	Կատարման ժամկետը		Ագրոտեխնիկական պահանջը
	սկիզբ	վերջ	
Խոր վար	10.10	13.10	25-28սմ խորությամբ
Կուլտիվացիա և փողյուս	3.03	5.03	շաղացան (12-14կգ/հա), կամ 45X10X10սմ (հինգծանի ժապավենաձև) 7-9 կգ/հա ցանքի նորմայով
Աշնան ցանք	15.10	20.10	
Գարնան ցանք	7.03	10.03	
Զրում	ըստ անհրաժեշտության		3-4 անգամ 300-400մ <sup>3</sup> հա ջրման նորմայով
Նոսրացում	3.04	10.04	միջբուսային տարածությունը 5-7սմ
Միջշարային կուլտիվացիա և սննդում	15.04	20.04	10-12սմ խորությամբ
Տերևների բնրքահավաք /պարբերաբար/	10.03	25.04	նուրբ, առողջ տերևները կամ վարդակը ամբողջովին
Բնրքի տեսակավորում և տեղափոխում	բնրքահավաքի ընթացքում		հնոացվում են դեղնած տերևները, իսկ մնացածը խրձեր կապում

**Աղյուսակ 5.****Կերբելով մոմատների քերատովությունը և քերքի որակական ցուցանիշները**

Տեսակը	1 բույսից բնրը,	Ընդհ. բնրը, գ/հա	Որից ապրանքային		Փնջերի քանակը	Քիմիական կազմը	
			գ/հա	%		հատ $1\text{m}^2\text{-ից}$	մգ%
Anthriscus cerefolium (L)	26	145	129	88.9	10-13	60	9

Տնտեսական արդյունավետության հաշվարկներով պարզվել է, որ կերբելով արտադրական ցանքերի ձևով մշակելիս, արդյունավետ է: Նախ, նրա հետագա կիրառումը կնպաստի մշակաբույսի ավելացմանը, հատկապես նրա վաղ ժամկետի բնրքի ապահովմամբ: Հիմք ընդունելով կատարված ծախսումներն ու մեկ միավոր արտադրանքի ինքնարժեքը, ինչպես նաև բնրքի իրացումից ստացվող արդյունքը, կարելի է եզրակացնել, որ շահութաբեր է:

**Աղյուսակ 6.****Կերբելով մոմատների մշակության տնտեսական արդյունավետությունը**

Բուսատնսակը	Բնրքատ վությունը	Կատարված ծախսերը	1գ-ի հաշվով /հազ. դրամ/			Շահույթը 1հա- ի հաշվով, հազար դրամ
			ինքնար ժեքը	իրացման գինը	շահույթը	
Anthriscus cerefolium (L)	145	275.5	1.9	3.5	1.6	232.0

**Գրականություն**

- Աբրահամյան Ե., Աբրահամյան Ն., Արգախյան դեղաբույսեր, <<Սոնա>> գրահրատարակչություն, 2011.
- Алексеев Б.Д., Важнейшие дикорастущие полезные растения Дагестана, Махачкала: Даггосиздат, 1967.
- Атлас ареалов и ресурсов лекарственных растений СССР, Подред. А.И. Толмачева, М., ГУГК., 1976.
- Губанов И.А., Крылова В.Л. Дикорастущие полезные растения СССР, М, 1976.
- Доспехов Б.А. Методика полевого опыта.-М.; Колос, 1968.
- Петров В.А. Энтомологика Нагорного Карабаха, Баку, 1940.

**Տեղնկություններ հեղինակի մասին.**

**Մայա Շատրյան - գ.գ.թ, ԱրԴՀ կենսաբանության ամբիոնի ավագ դասախոս:**

E – mail: Maya.c@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորնել խմբագրական կոլեգիայի անդամ, կ.գ.դ., Վ.Տ.Հայրապետյանը: